«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հասարակագիտություն

Թեմա՝ Գնահատում: Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում (Ի՞նչ է ուսումնառությանը նպաստող ուսումնառությունը):

Մասնակից՝ ***Անժելա Վիրաբյան***

Դպրոց՝ Արարատի մարզ Արբաթի Հ. Զաքարյանի անվ. միջն.

Վերապատրաստող՝ **Ա.Կարեյան**

Երևան 2023թ.

Բովանդակություն

1. Նախաբան էջ 3
2. Հետազոտական համատեքստ էջ 6
3. Գործնական համատեքստ էջ 8
4. Հետազոտական ընթացք էջ12
5. Տվյալների մշակում և վերլուծություն էջ16
6. Ամփոփում էջ18

Նախաբան

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է .Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա: Հանրակրթությունում այժմ գործում է գնահատման երկու հիմնական ձև՝ միավորային և ուսուցանող : Ամփոփիչ միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի :

Ա. Էյնշտեյնն ասել է << **Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է** >>:

Միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները: Միավորային գնահատման տեսակներն են. բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ աշխատանք, ամփոփիչ աշխատանք: Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ.

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է: Հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման սկզբունքն է՝ <<Յուրաքանչյուր սովորող կարող է և պետք է առաջ գնա>>: Ուսուցանող գնահատման

մեկ փուլը կարելի է ներկայացնել այսպիսի գծապատկերով.



Ուսուցանող գնահատման ձևեր ու միջոցներ են՝ հայտորոշիչ թեստ, բանավոր հարցում, տնային աշխատանք, համագործակցային, նախագիծ, ռեֆերատ կամ ինքնուրույն կատարման ուսումնական այլ առաջադրանք, բաց հարցերով քննարկում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, գործնական աշխատանք, կիրառություն, թղթապանակ: Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի վիճակի ճիշտ **հայտորոշմամբ**:

Հայտորոշիչ գնահատման ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում սովորողի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Հայտորոշման արդյունքում կիրառվող **հետադարձ կապը** նպաստում է, ունեցած տեղեկության հիման վրա սովորողի վիճակի և ուսուցման կազմակերպման բարելավմանը: Այն շարունակական և անընդհատ գործընթաց է: Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գործնական կամ գրավոր աշխատանքների (միավորային և ուսուցանող) արդյունքների քննարկման միջոցով: Սովորողին տրամադրվող հետադարձ կապը պետք է լինի հստակ, հասկանալի, ուղղորդող և ուղղակիորեն կապված լինի իր ուսումնառության հաջորդ քայլերի հետ:

Ուսուցանող գնահատումը պետք է իրականացվի նրբանկատորեն, լինի կառուցողական, քանի որ ցանկացած գնահատում ունի իր հուզակամային

ազդեցությունը: Ուսուցիչը պետք է տեղյակ լինի այն ազդեցությանը, որ կարող են ունենալ մեկնաբանությունը, գնահատականը կամ թվանշանը սովորողի ինքնավստահության և խանդավառության վրա և պետք է հնարավորինս կառուցողական լինի իր տրամադրած հետադարձ կապի մեջ: Աշխատանքի և ոչ թե անձի վրա կենտրոնացած մեկնաբանություններն ավելի կառուցողական են և՛ սովորելու, և՛ մոտիվացիայի համար:

Ուսուցանող գնահատումը պետք է հաշվի առնի սովորողի մոտիվացիայի կարևորությունը: Խրախուսող գնահատումը խթանում է մոտիվացիան՝ ավելի շատ շեշտելով առաջընթացն ու հաջողությունները՝ նվաճումները, քան ձախողումները: Ավելի լավ սովորողների հետ համեմատությունը հազիվ թե դրական շարժառիթ հանդիսանա սովորողների համար: Ուսուցանող գնահատման առանձնահատկությունը, որ դրա միջոցով սովորողն ուրիշների հետ չի համամեմատվում հատկապես կարևոր է դառնում ԿԱՊԿՈՒ սովորողի պարագայում:

Ուսուցանող գնահատումը պետք է նպաստի յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների լիարժեք բացահայտմանը և իրենց նվաճումները գնահատելու կարողությունների ձևավորմանը: Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Հետազոտական համատեքստ

Գնահատականը սովորողի համար պետք է լինի խրախուսող , բացահայտի նրա աճը, ուժեղ և թույլ կողմերը , հաջողություններն ու թերացումները: Սովորողին անհրաժեշտ է գնահատել հստակ գործողության համար և գործունեության արդյունքի համար :

Ուսուցչի համար գնահատումը պետք է լինի աշխատանքը պլանավորելու փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը բացահայտելու միջոց:

Գնահատման համար կիրառվում են տարբեր միջոցներ: Դրանք են՝ բանավոր հարցում, թեստային առաջադրանք, հարցարան, գնահատման սանդղակ:

Ավանդական գնահատումը հնարավորություն չի ընձեռնում սովորողի մոտ ձևավորել ինքնագնահատում, գնահատման այս եղանակը անհարմար է սովորողի համար և բացասական է ազդում նրա մոտիվացիայի վրա:

Սովորողների մոտ պատասխանատվության զգացողություն զարգացնելու, ուսման գործընթացը ճիշտ ընկալելու և սեփական առաջընթացը արձանագրելու համար չափազանց կարևոր է նրանց իրենց իսկ ուսումնառության և գնահատման գործընթացի մեջ ընդգրկելը :

Սովորողների համար ինքնագնահատումը (ինքնավերահսկողությունը) կարևոր է ուսուցման տարբեր փուլերում : Այն հատուկ գործողություն է , որն ուղղված է սեփական հատկություններին ու վիճակներին:

Ինքնագնահատումը կարելի է իրականացնել հետևյալ կերպ:

1. Նախնական ինքնագնահատում , որն արվում է առաջադրանքի կատարման սկզբում : Սովորողը պետք է համոզվի արդյոք ճիշտ է հասկացել ուսումնական նյութը, ուսուցչի պահանջները :

2.Առաջադրանքի ինքնուրույն կատարման փուլ, որում անհրաժեշտ է խրախուսել ինքնահսկումը :

3.Ինքնուրույն աշխատանքի եզրափակիչ փուլ ։ Այս փուլում ամփոփվում և ստուգվում է ստացված արդյունքները։

Գործունեության ցանկացած փուլում կարելի է զարգացնել ինքնավերահսկողության, ինքնավերլուծության հմտություններ, մղել նրանց ինքնուրույն վերլուծելու և եզրահանգումներ անելու, մտածել լուծման այլ եղանակներ, համեմատել դրանք դասագրքի օրինակների հետ ։

Ինքնագնահատման հմտության ձևավորման մյուս կարևոր պայմանը սովորողների ներգրավումն է փոխադարձ ստուգման և գնահատման տարբեր ձևերի մեջ։ Օրինակ գրավոր պատասխանների փոխադարձ ստուգումը , ամփոփիչ ինքնուրույն աշխատանքի ստուգումն է։ Դասի վերջում կարելի է տալ սովորողներին կարճ հարցաշար, որը թույլ կտա իրականացնել ինքնավերլուծություն, դասի որակական և քանակական գնահատում։ Որպեսզի դասն ավարտվի դրական նոտայով կարելի է օգտագործել «Հաճոյախոսություն» վարժությունը (գործնական ունակությունների հաճոյախոսություններ , գովասանքի, զգացմունքների), որտեղ սովորողները գնահատում են միմյանց ներդրումը դասի մեջ և շնորհակալություն հայտնում միմյանց և ուսուցիչին դասի համար։

Այս տարբերակը հնարավորություն է տալիս նրանց խոստովանել և գնահատել յուրաքանչյուր անհատի նշանակությունը։ Սովորաբար դասի վերջում ամփոփվում են դասի արդյունքները , քննարկվում է ի՞նչ են սովորել, և ինչպե՞ս պետք է աշխատեն , այսինքն, յուրաքանչյուրը գնահատում է իր ներդրումը դասի սկզբում դրված նպատակների իրագործման համար , իր ակտիվությունը դասի ժամանակ , գործունեության արդյունավետությունը, կատարած աշխատանքի և ընտրված ձևերի արդյունավետությունը ։ Սովորողները մեկ նախադասությամբ արտահայտվում են ընտրելով որպես սկիզբ գրատախտաին գրված արտահայտություններից որևէ մեկը. (Հավելված1)։

Գործնական համատեքստ

Իմ հետազոտության թեման ընտրել եմ ձևավորող գնահատման ձևերից ինքնագնահատում և փոխադարձ գնահատումը : Հետազոտության համար ընտրել եմ Արարատի մարզի Արբաթի միջն. դպրոցի 10-րդ դասարանը, քանի որ ուզում էի նրանց մոտ բարելավել կրթության որակը, հենվելով հետադարձ կապի վրա սովորողներին սովորել սովորեցնել, կարողանան ավելի համակարգված և արդյունավետ աշխատել:

10-րդ դասարանում ուսումնասիրում են հասարակագիտություն առարկայի գեղագիտություն բաժինը և սովորողների մոտ ձևավորվում է այն պատկերացումները, որ առարկան բավականին խրթին է և դժվար ըմբռնելի, իմ խնդիրն էր սովորողներին դարձնել լիիրավ մասնակից (կանոնների թափանցիկություն):

- *Բարձրացնել նրանց հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:*
- *Բարձրացնել սովորողների գիտելիքների որակը :*
- *Սովորեցնել սովորողներին կատարել ինքնագնահատում և ինքնավերահսկողություն:*
- *Բարձրացնել սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը նյութի ուսումնասիրման ընթացքում:*
- *Դաստիարակել սովորողների մոտ փոխօգնության և համագործակցային ունակություններ:*

Քանի որ, ընկերոջ աշխատանքում սխալներ հայտնաբերելն ավելի հեշտ է, քան սեփական աշքատանքում, իսկ ձեռք բերած հմտությունները աշակերտը փոխանցում է իր գործունեությանը (ինքնավերահսկողություն):

Անհրաժեշտ էր նաև, որ սովորողը դիտարկի իր ուսումնական գործընթացը, իրականացնի ինքնավերլուծություն և ինքնագնահատում: Նրա ինքնավերլուծության և ինքնագնահատման ունակությունից կախված է իր ուսման հաջողությունը, իր

ուսուցման նկատմամբ պահանջկոտությունը և ադեկվատ արձագանքը ուսուցչի կողմից իր գործունեության գնահատման դեպքում:

Այս աշխատանքի արդյունքում սովորողները կազմակերպում են իրենց գործունեությունը ցիկլերով , պարբերաբար ստուգելով այն:

Հետազոտության գաղափարը կայանում էր նրանում, որ ստեղծվի սովորողների անհատական զարգացման պայմաններ, կատարելագործվի սովորողների ինքնագնահատումն ու փոխադարձ գնահատումը: Սովորողներին առավելագույն ընդգրկումը ուսուցման պրոցեսի տարբեր տիպի գործունեությունների մեջ նպաստում է և՛ ուսուցչի և՛ սովորողի ավելի էֆեկտիվ զարգացմանը :

Իմ գործունեության ժամանակ ես օգտագործել եմ հետևյալ հնարները.

Սովորողներին հանձնարարում եմ կիրառելով անցած նյութը, կազմել խնդիրներ համադասարանցիների համար : Սովորոները միևնույն խնդիրը լուծում են տարբեր եղանակներով, գտնում են առավել արդյունավետ լուծման եղանակներ, հայտնաբերում են նախապես տրված թեստի սխալները, գտնում խնդրում առկա ավելորդ կամ պակասող տվյալները:

Ձևավորող գնահատման համար տրվել են տարաբնույթ առաջադրանքներ, թեստային աշխատանքներ , որոնք վեր են հանել սովորողների ունակությունները, դրանց անընդմեջ կիրառումը հնարավորություն կտա հասնել ուսուցման ավելի բարձր որակների: Ուսուցման տարբեր փուլերում կիրառել եմ գնահատման տարբեր մոտեցումներ, դրանցից են.

- **Հասկացությունների քարտեզ**- սա իրենից ներկայացնում է ցանցային դիագրամ, որն արտացոլում է գիտելիքների կառուցվածքը որոշակի առարկայական ոլորտում , ինչպիսին է այն տեսնում սովորողը, ուսուցիչը կամ դիտորդը: Քարտեզը կազմված է հասկացությունների անվանումներից, որոնք տեղադրված են վանդակների մեջ , որոնք կապված են որոշակի գծերով , դրանք ցույց են տալիս հասկացությունների միջև եղած կապը՝ գլխավորից մասնակին:
- Դիտարկելով քարտեզը գագաթից դեպի հիմք կարելի է պատկերացում կազմել թե ինչպես են սովորողները ընկալել գիտական թեման , ստուգել ընկալման աստիճանը և նրանց մոտ առաջացած կեղծ կամ սխալ դատողությունները , գնահատել սովորողների մոտ հաստատված կառուցվածքային կապերը :

- **Ինքնագնահատման սանդղակ (թերթիկ)-** այն հանդիսանում է անձի ձևավորման կենտրոնական բաղադրիչներից մեկը, ն վերուստ, այն փոփոխվում է , ձևավորվում է գործունեության և անձնային փոխհարաբերությունների արդյունքում: Ուստի մեր հիմնական նպատակը պետք է լինի զարգացնել օբյեկտիվ ինքնագնահատում, որի արդյունքում սովորողը կսովորի ոչ միայն տեսնել և արձանագրել դժվարությունները , այլ նաև սովորել այն հաղթահարել: Սովորողը պետք է հստակ իր համար որոշի ***<<Սա գիտեմ, իսկ սա պետք է սովորեմ>>:***

- **Թեստերի կազմում**- սովորողները ինչ –որ թեմայի շուրջ կազմում են թեստ կամ հարցեր քննության համար նախատեսված ձևաչափով , և դրանց հնարավոր պատասխանները : Սա թույլ է տալիս գնահատել անցած թեման , կատարել անդրադարձ՝ թե ինչ հասկացան և ինչ հարցեր են համապատասխանում թեստի համար: Այսպիսի աշխատանքը թույլ կտա գնահատել հարցերի որակը ինչպես նաև կարելի է այդ հարցերը փոքր շտկումներից հետո օգտագործել թեման վատ յուրացրած աշակերտների համար:
- ների համար:

Գնահատման ռուբրիկ կամ սանդղակ -(Հավելված 3) Ռուբրիկը գնահատման ձև է, որը սանդղակի միջոցով համադրում է սովորողների ըմբռնման որակը , հմտության աստիճանների տարբերակման չափանիշները և առաջադրանքների կատարման որակը։ Այն ունի մի շարք առավելություններ , մասնավորապես.

- ✓ Օգնում է ուսուցչի և սովորողի փոխհամաձայնությամբ կենտրոնանալ կոնկրետ հարցերի վրա։
- ✓ Ռուբրիկի միջոցով սովորողը առաջադրանք կատարելուց հետո որոշակի տեղեկություն է ստանում իր ուսումնառության մասին :
- ✓ Հստակեցնում կամ պարզաբանում է ուսուցչի և սովորողների ակնկալիքները։
- ✓ Ռուբրիկը օգնում է սովորողին հասկանալ գնահատականի իմաստը , մատնանշում թերությունները , ընդգծում բացթողումները , օգնում է լավ յուրացված նյութը տարբերի թերի և անկանոն գիտելիքներից և աշխատանքը բարելավելու միջոցներ գտնել։

Սովորողները պետք է հասկանան, թե գնահատման ժամանակ ինչ արդյունքներ ենք մենք իրենցից սպասում և որ ավելի կարևոր է ինչ չափանիշներից ենք օգտվում։ Ռուբրիկները սովորողների հետ փոխազդեցության , համատեղ ուսումնական նպատակների մշակման և նպատակներին հասնելու եղանակներ ապահովելու հասանելի ճանապարհ են : Հիմնականում այն օգտագործվում է գրավոր աշխատանքների ժամանակ :

- **Կարճ վերլուծություն** -Վերջին մի քանի րոպեի ընթացքում սովորողներին տրվում է թերթիկներ և նրանք պատասխանում են հետևյալ հարցերին

1. Դասի ո՞ր պահն էր ամենակարևորը։
2. Ի՞նչն էր անհասկանալի :

Շաբաթվա վերլուծություն -Սա հարցաթերթիկ է , որին նրանք պատասխանում են շաբաթվա վերջում : Հարցերը 3-ն են՝

- Ի՞նչ սովորեցի այս շաբաթ ։
- Ի՞նչ հարցեր մնացին անհասկանալի ։
- Եթե ուսուցիչ լինեի պարզելու համար հասկացել են նյութը թե ոչ ի՞նչ հարցեր կտայի սովորողներին ։

Այս մոտեցումները կիրառելիս վստահ էի, որ յուրաքանչյուր սովորող կարող է ավելի լավը դառնալ, ուզում էի ստեղծել համագործակցություն իմ և սովորողների միջև, սովորողների հետ գնահատականի քննարկումը թույլ կտա պարզել ուսման և դասավանդման ընթացքը, միասին կսահմանենք պարզ և հասանելի նպատակներ, հետադարձ կապի միջոցով սովորողները կորոշեն հետագա քայլերը և ինչպես դրանք իրագործեն ։

Հետազոտական ընթացքը

Դաս1

Դասի թեմա «Ի՞նչ է գեղեցիկը, գեղեցիկի հասկացությունը, գեղեցիկը տարբեր մշակութային միջավայրերում »

Դասի նպատակը՝ խորացնել սովորողների գիտելիքները , գեղեցիկի հասկացության,գեղագիտական արժեքների և ներկայացնել գեղեցիկը տարբեր մշակութային միջավայրերում .

Վերջնարդյունքներ-. Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Իմանալ ինչ է գեղեցիկը:
2. Տարբերակի գեղեցիկի ընկալումները , համեմատի տարբեր իմաստասերների գեղեցիկի բնութագրումները:
3. Ներկայացնել գեղեցիկի հասկացությունը մարդկության զարգացմանը զուգընթաց:

Սովորողներին ներկայացնում եմ դասի թեման և նպատակները , բացատրում եմ դասի ընթացքը :
Դասի սկզբում կիրառում եմ <<մեկնաբանություններ>> մեթոդը, գրատախտակին գրում եմ գեղագիտություն բառը և սովորողներին հանձնարարում եմ մտածել և մտքեր արտահայտել հետևյալ արտահայտության շուրջ:
1. Ի՞նչ ենք հասկանում գեղեցիկ ասելով, միջառակայական կապ հաստատելով հայոց լոզվի հետ վերհիշում են գեղեցիկի հոմանիշներ և հականիշներ:
2. Ըստ պատմական անցյալի գեղեցիկի ի՞նչ ընկալումներ կան:
3. Ինչպես ենք ուսումնասիրում տարբեր էթնիկ մշակույթներում գեղեցիկը, կարևորել հայ իրականության մեջ գեղեցիկի դերը:

Սովորողների առաջնային մտքերը գրում են գրատախտակին , առանց մեկնաբանելու:
Իմաստի ընկալման փուլում ներկայացնում եմ դասանյութը պարզաբանելով սովորողների մոտ առաջացած հարցերը :
Կշռադատման փուլում հանձնարարում եմ սովորողներին լրացնել T –աձև աղյուսակը, (հավելված 2) որից հետո զույգերով իրականացնում են աշխատանքների փոխադարձ ստուգում :
Դասի անդրադարձը կատարում եմ <<կարճ վերլուծություն >> մեթոդի միջոցով:

Դաս 2

Դասի թեման՝Կենցաղի և առօրեականության գեղագիտական բնութագրերը:

Դասի նպատակը՝ Ընդլայնելով սովորողների գիտելիքները ներկայացնել մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական կողմերի մասին , գաղափար տալ մոդայի ,ազգային հագուստի, ինչպես նաև, պատկերացում տալ գեղեցիկ վարվելակերպի և հաղորդակցության մասին:

Վերջնաարդյունքներ՝

1 Պետք է նկարագրեն մոդայի գեղագիտական տարրը, մոդան երաժշտության, գրականության ,ճարտարապոտության և այլ ոլորտներում :

2. Բացատրել ազգային հագուստների տարբերությունները և առանձնահատկությունների պատճառները:

3.Իմանալ , որ գեղեցիկ վարվելակերպի և գեղեցիկ հաղորդակցության ընթացքում առաջանում է նաև գեղեցիկի զգացողությունը :

Դասի խթանման փուլում կատարում եմ նախորդ դասի վերաբերյալ հարցերի պարզաբանում, դասի հարցումը իրականացնում եմ փոխստուգման միջոցով , սովորողները փոխադարձ հարցադրման և պարզաբանման միջոցով ստուգում են գիտելիքների յուրացման մակարդակը, ուղղելով ընկերների կատարած սխալները:

Իմաստի ընկալման փուլում կիրառում եմ «ԳՈՒՍ» մեթոդը , սովորողները լրացնում են աղյուսակի առաջին և երկրորդ՝ գիտեմ և ուզում եմ իմանալ սյունակները : Հանձնարարում եմ ուսումնասիրել նյութը պարբերություն առ պարբերություն , առաջացած հարցերը առաջարկում եմ քննարկել ընկերների հետ , իսկ չպարզաբանված հարցերը դասարանի հետ միասին իմ միջոցով է պարզեցվում: Սովորողները ինքնուրույն լրացնում են երրորդ սյունակը :

Անդրադարձ կատարում եմ հավելված 2-ի հարցերի միջոցով:

Դաս 3

Դասի թեման՝ Գեղեցիկը արվեստում:

Դասի նպատակը Ամրապնդել գիտելիքները գեղեցիկի, արվեստը որպես մարդու ինքնաարտահայտման ազատություն երևույթի մասին:

Տալ գաղափար արվեստի տարբեր բնագավառների «գեղանկարչություն, պար, թատրոն, լուսանկարչություն, կինո, հեռուստատեսություն, դեկորատիվ-կիրառական արվեստ» գեղագիտական մոտեցումների մասին.

Վերջնարդյունքում՝ 1- Սովորողը պետք է իմանա ի՞նչ է արվեստը, ո՞րն է նրա գեղագիտական վերլուծությունը, արվեստի ճյուղերի մասին:

2- Արվեստը համարվել է նմանակում բնությանը կամ մարդուն, և խաղ, որտեղ ամեն ինչ պայմանական է ,և ինքնանպատակ,այսինքն արվեստն արվեստի կամ արվեստագետի համար, և մարդկանց կրթող, հոգեպես մաքրող գործիք, և զբաղմունք, ժամանց է:

3-Կարողանալ վերլուծել միջնադարի հայ մեծ մտածող Դավիթ Անհաղթի այս միտքը«արվեստները բաժանվում են օգտակար և անօգուտ արվեստների օրինակ, հյուսնությունն օգտակար արվեստ է, իսկ լարախաղացությունը ան օգուտ »:

Զարգացնել համագործակցային կարողությունները (սովորողներին բաժանել երեք խմբի) խմբի աշխատանքում սեփական ներդրում , մտահաղացումներ առաջարկելու կարողությունը :

Ուշադրություն եմ դարձնում սովորողների տրամաբանական մտածողության և ինքնուրույն աշխատելու կարողությունը զարգացնելու վրա , ստեղծում եմ ինքնագնահատման զարգացման հնարավորություն:

Դասի խթանման փուլում կատարում եմ նախորդ դասի վերաբերյալ հարցերի պարզաբանում , հարցում, գնահատում: Գնահատման ժամանակ ներգրավում եմ սովորողներին, ովքեր փորձում են գնահատել սեփական պատասխանը և ընկերների պատասխանները:

Իմաստի ընկալման փուլում նկարագրում եմ արվեստի տարբեր բնագավառները և սովորողների միջոցով ներկայացնում տարբեր արվեստի ճյուղեր տեսասահիկի միջոցով:

Տեսասահիկի օգնությամբ փորձում ենք տարբեր արվեստների ճյուղերի մեջ առանձնացնել նրանց ոճերը (հավելված 3) և առաջարկվում է լրացնել աղյուսակը հետևյալ կերպ՝ առաջին սյունկում համառոտ գրել արվեստի տեսակը, երկրորդում՝ արվեստի ոճը։

Աշխատում են ինքնուրույն, ես միայն ուղղորդում եմ նրանց։

Աշխատանքը կատարելուց հետո գրատախտակի մոտ կանչում եմ սովորողներից մեկին, ով ճիշտ և առաջինն է կատարել առաջադրանքը։ Նա բացատրում և հիմնավորում է աշխատանքը և գնահատվում։ Տետրում սովորողները աղյուսակի վերջին սյունակում գրում են ճիշտ պատասխանները, մտածում են ո՞րն է իրենց սխալը։

Հանձնարարում եմ ինքնուրույն պատրաստել տարբեր բարդության վերլուծություններ իրենց ընտրած արվեստի մասին և դրանք առաջարկել դասընկերներին։

Որպեսզի դասն ավարտվի դրական նոտայով օգտագործում եմ «Հաճոյախոսություն» վարժությունը, որտեղ սովորողները գնահատում են միմյանց ներդրումը դասի մեջ և շնորհակալություն հայտնում միմյանց և ուսուցիչին դասի համար։ Այս տարբերակը հնարավորություն է տալիս գնահատել յուրաքանչյուր անհատի նշանակությունը։

Դաս 4

<u>Դասի թեման</u> ՝ Գեղագիտական իդեալ և ճաշակ.

Դասի նպատակը՝ Գաղափար տալ գեղագիտական իդեալի և ճաշակի մասին , զարգացնել նոր նյութն ինքնուրույն ուսումնասիրելու կարողություններ և ինքնագնահատման հմտություններ ։

Վերջնաարդյունքներ՝

Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա .

1-Վերլուծել իդեալ հասկացությունը և «Իդեալ » բառի ծագումը ։

2-Հասկանալ որ, իդեալը նպատակ է, որին ամբողջովին հասնելն անհնար է, բայց այն հանդես է գալիս որպես կողմնորոշիչ, այս ձգտումը մարդկանց դրդում է գործել.

3-Իմանալ որ, ճաշակը մարդու հագեկերտվածքի այնպիսի բնութագիր է, որի շնորհիվ վերջինս կարողանում է գեղեցիկը, վեհը, ներդաշնակը զանազանել ոչ գեղեցիկից։

Դասի ընթացքը ՝. Խթանման փուլում ցուցադրում եմ բարձրաճաշակ կտավների օրինակներ , տեսանյութեր ու նկարներ«Բարոկկո, Ռոկոկո, Ռեալիզմ, Ռոմանտիզմ» ոճերի , հանձնարարում եմ նախապես բաժանված երեք խմբերին քննարկել դիտված երևույթները և փորձել բացատրել ։

Խմբերի քննարկումից հետո լսում ենք նրանց պատասխանները առանց ուղղելու դրանք։

Որից հետո բացատրում եմ դասանյութը։ Այնուհետև հանձնարարում եմ խմբերին նորից քննարկել և եզրահանգումներ կատարել գտնելով իրենց մեկնաբանություններում կատարած սխալները, ուղղել դրանք ։

Հաջորդ փուլում խմբերին հանձնարում եմ հարցեր թեմայի վերաբերյալ ։

Կազմած հարցերը խմբերը ուղղում են միմյանց , որն օգնում է ամրապնդել դասը, պարզել անհասկանալի հարցերը, հանձնարարում եմ տնային աշխատանք ։

Որպեսզի սովորողները կատարեն իրենց գործունեության ինքնավերլուծություն տալիս եմ հարցաթերթիկներ <<Ինչպիսի՞ն եմ ես խմբում >> և <<Ինքնագնահատման թերթիկ>> ։ (Հավելված 4;5

Հետազոտության վերլուծություն

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել սովորողների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման ազդեցությունը սովորողների ներգրավվածության արդյունավետության վրա:

Վերլուծելով

1-ին դասը և համեմատելով սովորողների ակտիվությունը և ներգրավվածությունը նախորդ դասերի նկատմամբ՝ գրանցեցի, որ երբ նրանք կատարում էին ինքնագնահատում և փոխադարձ գնահատում սովորողներն ավելի ուշադիր էին, փորձում էին ավելի քիչ սխալվել, շատ մասնակցել հարցադրումներին և պատրաստակամորեն օգնում էին իրար դասանյութը ավելի լավ յուրացնելու համար, որը նպաստում էր ուսման որակի բարձրացմանը: Հատկապես ակտիվ էին փոխադարձ գնահատման ժամանակ: Բայց դժվարությունը այն էր, որ գնահատումը իրականացնում էին սուբյեկտիվորեն, գնահատում էին ոչ հիմնավորված, այլ հաշվի էին առնում ընկերական հարաբերությունները: Թերությունն այն էր, որ որոշ սովորողներ ինքնուրույն աշխատանք կատարելիս օգտվում էին միմյանցից , ինքնուրույն չէին աշխատում :

2-րդ դասի վերլուծությունը ցույց տվեց, որ ներգրավվածությունը նախորդ դասի համեմատ աճել է, սովորողները սկսել էին ավելի ինքնուրույն աշխատել , զարգացել էր նրանց մոտ ինքնավերլուծությունը, գնահատման ժամանակ փորձում էին հիմնավորել գնահատականը և լինել ավելի օբյեկտիվ: Բարելավված արդյունքներով սովորողների մոտ մեծ ոգևորվածություն կար, սովորողների մի մասը համեմատեց իր արդյունքները դասընկերների արդյունքների հետ, զգացվում էր մրցակցային ոգին:

3-րդ դասի վերլուծությունը ցույց տվեց, որ հարց տվող սովորողների թիվը ավելացել է, սովորողների ինքնավերլուծությունը նպաստում էր սովորողների գիտակցված սովորելուն: Նկատվում էր ներգրավվածության ակնհայտ աճ: Հետաքրքիր էր այն փաստը, որ կային սովորողներ, որոնք իրենց առաջադիմությամբ

մինչ հետազոտությունը աչքի չէին ընկնում, սակայն այժմ իրենց արդյունքներով գերազանցում էին նույնիսկ բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին: Դասից դաս աճում էր հետքրքրությունը առարկայի նկատմամբ :

4-րդ դասի վերլուծությունը ցույց տվեց, որ ինքնագնահատումն և ինքնավերահսկողությունն օգնում է սովորողին դառնալ ավելի ինքնուրույն, բարձրացնում է նրա հետաքրքրությունը առարկայի նկատմամբ, ինքնավերլուծության և փախադարձ գնահատման իրականացման արդյունքում սովորողների մոտ ձևավորվում է փոխօգնության և համագործակցային ունակություններ:

Ուսուցանող գնահատման կիրառման այս տեսակները թույլ են տալիս սովորողներին հեշտությամբ գրանցել առաջընթացներ , հաջողություններ, նվաճումները և պարզել ձախողումները:

Սովորաբար դասի վերջում ամփոփվում են դասի արդյունքները, քննարկվում է ի՞նչ են սովորել, և ինչպե՞ս պետք է աշխատեն, այսինքն, յուրաքանչյուրը գնահատում է իր ներդրումը դասի սկզբում դրված նպատակների իրագործման համար, իր ակտիվությունը դասի ժամանակ, որը բարձրացնում է սովորողների գիտելիքների որակը :

Սովորողների ինքնագնահատման և ինքնավերահսկողության արդյունքում բարձրացավ նրանց ակտիվությունը, նյութի ուսումնասիրման ընթացքում աշխատում էին ավելի ինքնուրույն, նրաց ոգևորում էր սեփական ուժերով հաջողության հասնելու գաղափարը, հավատում էին սեփական ուժերին:

Հատկապես գրավոր պատասխանների փոխադարձ ստուգման և ինքնուրույն աշխատանքի ստուգման ընթացքում, ավելի էր մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ.

Եզրակացություն

Հետազոտության ընթացքը ցույց տվեց, որ փոխադարձ գնահատման և ինքնագնահատման արդյունքում սովորողների մոտ ձևավորվեց ինքնավերահսկողությունը, քանի որ ընկերոջ աշխատանքում սխալներ հայտնաբերել ավելի հեշտ է և իրենց տարիքի համար ավելի հաճելի քան սեփական աշխատանքում, ուստի ձգտում էին ավելի լավ յուրացնել թեման, որպեսզի իրենց ստանձնած ժամանակավոր ուսուցչի դերը ավելի լավ կատարեն: Ձեռք բերած հմտությունները սովորողները փոխանցում էին իրենց գործունեության մեջ, այսինքն կատարում է ինքնավերահսկողություն:

Ուսուցանող գնահատումը նպաստում է յուրաքանչյուր սովորողի հնարավորությունների լիարժեք բացահայտմանը և իրենց նվաճումները գնահատելուն: Գործունեության ցանկացած փուլում զարգանում է ինքնավերահսկողության, ինքնավերլուծության հմտություններ, մղում նրանց ինքնուրույն վերլուծելու և եզրահանգումներ անելու, մտածելու լուծման այլ եղանակներ:

Դասի վերջում դասի արդյունքների ամփոփումը, քննարկումը թե, ինչ են սովորել և ինչպես, հնարավորություն է տալիս որոնել և գտնել ավելի արդյունավետ աշխատելու եղանակներ, մտածում են ինչպես պետք է աշխատեն , յուրաքանչյուրը գնահատում է իր ներդրումը դասի սկզբում դրված նպատակների իրագործման համար, իրենց ակտիվությունը դասի ժամանակ, գործունեությունը, արդյունավետությունը, սովորեցնում է սովորողներին կատարել ինքնագնահատում և ինքնավերահսկողություն: Բայց ինքնագնահատումը տրված չէ ի վերուստ, այն փոփոխվում է, ձևավորվում է գործունեության և անձնային փոխհարաբերությունների արդյունքում: Ուստի մեր հիմնական նպատակը պետք է լինի զարգացնել օբյեկտիվ ինքնագնահատում, որի արդյունքում սովորողը կսովորի ոչ միայն տեսնել , արձանագրել դժվարությունը , այլ նաև կսովորի այն հաղթահարել: Սովորողը պետք է հստակ իր համար որոշի <<**Սա գիտեմ, իսկ սա պետք է սովորեմ**>>:

Յուրաքանչյուր դասին ունեցած փոքրիկ հաջողությունները ոգևորում էր նրանց հանգեցնում նրան , որ նրանք վստահում են իրենց ուժերին առարկան յուրացնելիս:

Գրականության ցանկ

1. <<Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիների համար>> Ա. Արնաուդյան , Ա. Գյուլբուդաղյան , Ս. Խաչատրյան ,Ս Խրիմյան , Մ .Պետրոսյան Երևան 2004

2, Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն. Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան ,2005.

3, 10-րդ դասարանի դասագիրք Ս.Պետրոսյան , Կ. Վարդանյան , Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան, Հ. Աղաջանյան.

4,https;//hy.m.wikipedia.org.

5,Սովորողների գնահատման հայեցակարգ,ՀՀ ԿԳՆ,Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան ,2005.

Հավելված 1 (էջ 7, 12)

1 Այսօր ես իմացա ...

2 հետաքրքիր էր.. .

3 դժվար էր ...

4 Ես կատարեցի առաջադրանքը .

5 .ես հասկացա, որ ...

6 Հիմա ես կարող եմ...

7 Ես զգացի, որ ...

8 Ես ձեռք բերեցի ...

9 Ես սովորեցի ...

10 Ինձ մոտ ստացվեց ...

11 Ես կարողացա ...

12 Ես կփորձեմ ...

13 Ինձ զարմացրեց ...

14 Դասը ինձ տվեց կյանքի համար ...

15 Ես ուզում եմ ...

(հավելված 2 էջ13)

Ես գիտեմ	Կսովորեմ

(հավելված 3էջ15)

Արվեստի տեսակ	Արվեստի ոճ	Ճշտված փաստ

(հավելված 4 էջ 16)

Ինչպիսի՞ն եմ ես խմբում

1. Մի որոշ ժամանակ լուռ եմ մնում, հետո միանում եմ խմբի քննարկումներին։
2. Ինձ լավ չեմ զգում և կուզենայի ,որ միայնակ աշխատեի։
3. Ուզում եմ իմ ձեռքը վերցնել և ինքս կառուցել քննարկումները։
4. Ոզում եմ իմ վրա վերցնել առաջնորդի դերը։
5. Քաջալերում եմ մյուսների մասնակցությունը ։
6. Հետաքրքիր գաղափարներ եմ արտահայտում։
7. Մյուսներին ընդհատում եմ , որպեսզի իմ ասածն առաջ տանեմ ։
8. Հիշեցնում եմ խմբին գործնական քայլերի և իմ առջև դրած խնդիրներին հասնելու մասին։
9. Բոլորի համար հանգիստ իրավիճակ եմ ստեղծում և նպաստում ներդաշնակությանը։
10. Նյարդայնանում եմ,երբ մարդիկ չափից դուրս շատ են խոսում՝ փոխանակ որոշումներ կայացնելու կամ գործելու։
11. Փորձում եմ հաշտեցնողի դեր խաղալ խմբի այն անդամների համար ,ովքեր խիստ անհամաձայնություն ունեն միմյանց հետ։ 12

(հավելված 5 էջ 17)

	Գնահատման թերթի					
		Աշակերտներ				
		Ա	Բ	Գ	Դ	Ե
+2	Քննարկվող հարցի մասին որոշակի դիրքորոշում					
+1	Էական ,տեղին միտք, դիտարկում , դիտողություն					
+2	Ապացույցներ, որոնք հաստատում են միտքը կամ փաստացի տվյալների մեջբերումը					
+1	Քննարկման մեջ մեկ ուրիշի ներգրավումը					
+1	Հարց՝ միտքը ճշգրտելու կամ քննարկումը շարունակելու նպատակով					
+2	Համանմանություններ գտնելը , զուգահեռներ անցկացնելը					
+2	Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մտքերի բացահայտումը					
+2	Ոչ տեղին դիտողությունների բացահայտումը					
-2	Անուշադրությունը կամ ուրիշների ուշադրությունը շեղելը					
-2	Խոսողին ընդհատելը					
-1	Ոչ տեղին դիտողությունը					
-3	Քննարկման մենաշնորհումը					
-3	Անձնական վիրավորանք					
	Ընդհանուր միավորներ					